

# ՍԱՂՄՈՍ 74

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Թշնամու կողմից երկրի ամայացման դեմ աղերսանք	Նեղիչներից ազատվելու աղաչանք	Ազգի թշնամիներից ազատվելու աղոթք	Ազգային ազատագրման աղոթք	Ողբ տաճարը թալանվելու վրա
<u>MT ներածություն</u> Ասափի Սաղմոսը				
74:1-11	74:1-8	74:1-3	74:1-3	74:1-2 74:3-5ա
		74:4-8	74:4-8	74:5բ-7 74:8-9
	74:9-17	74:9-11	74:9-11	74:10-11
74:12-17		74:12-17	74:12-17	74:12-13 74:14-15 74:16-17
74:18-21	74:18-21	74:18-19 74:20-23	74:18-19 74:20-21	74:18-19 74:20-21
74:22-23	74:22-23		74:22-23	74:22-23

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը Ուխտի Աստծուն աղերս է հիշելու (տես՝ Սաղմ. 74:1,18,22) Իր ժողովրդին մի այնպիսի ժամանակ, երբ Ավետյաց Երկիրը (տես՝ Ծննդ. 12:1-3) հեթանոսների կողմից հարձակման է ենթարկվել և նվաճվել (տես՝ Սաղմ. 74:4-8): Ուշադրություն դարձրեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻ (այսինքն՝ աղոթքի խնդրանքների) համատեքստային հոսքը:

1. Հիշիր Քո ժողովրդ, Սաղմ. 74:2
2. բարձրացրու (այինքն՝ քայլերդ բարձրացրու), Սաղմ. 74:3
3. կործանիր նրանց, Սաղմ. 74:11
4. հիշիր սա, Սաղմ. 74:18
5. նայիր Քո ուխտին, Սաղմ. 74:20
6. ելիր, Սաղմ. 74:22
7. պաշտպանիր Քո դատը, Սաղմ. 74:22
8. հիշիր անմիտների նախատինքը, Սաղմ. 74:22

Բ. Ուշադրություն դարձրեք տարբեր արտահայտությունների, որոնք նկարագրում են ուխտի ժողովրդին՝

1. Քո արոտի ոչխարները, Սաղմ. 74:1
2. Քո ժառանգության ցուպը՝ ցեղը, Սաղմ. 74:2
3. Քո տատրակը, Սաղմ. 74:19
4. աղքատն ու կարիքավորը, Սաղմ. 74:19,21

Գ. Ուշադրություն դարձրեք տաճարը նկարագրող արտահայտություններին՝

1. Սիոն լեռը, Սաղմ. 74:2
2. մշտնջենական ավերմունքները, Սաղմ. 74:3
3. Քո սրբարանը, Սաղմ. 74:3,7
4. Քո ժողովրդ, Սաղմ. 74:4
5. Քո անվան բնակարանը, Սաղմ. 74:7

Դ. Ուշադրություն դարձրե՛ք այս պարբերությանը (Սաղմ. 74:12-17, հիմնականում ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ), որն Աստծուն նկարագրում է որպես ստեղծագործության Թագավոր՝ կիրառելով Ծննդոց 1-ից պատկերներ (տես՝ Սաղմոս 104) և Ուգարտական պոեզիա:

Ե. Չարմանալի է, որ ուխտի ժողովուրդը չգիտի, թե ինչու է ՅԱՀՎԵՆ թողել նրանց (այսինքն՝ իրենց ուխտի անհավատարմությունը): Նրանք ապաշխարության ոչ մի ակնարկ անգամ չեն անում, այլ պնդում են Աստծո հավատարմությունը Իր խոստումներին (նկատեք, թե ինչքան տարբեր է Սաղմոս 79-ում):

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 74:1-11**

<sup>1</sup>Ո՛վ Աստված, ինչո՞ւ մեզ բոլորովին մերժեցիր,

Ինչո՞ւ է բարկությունդ միտում Քո արոտի ոչխարների վրա:

<sup>2</sup>Հիշի՛ր Քո ժողովրդ, որ ի սկզբանե գնեցիր,

Քո ժառանգության ցուպը, որ Դու փրկագնեցիր,

Այս Սիոն լեռը, որտեղ բնակվեցիր:

<sup>3</sup>Բարձրացրո՛ւ Քո քայլերը դեպի մշտնջենական ավերմունքները՝

Թշնամու կատարած անօրենությանը Քո սրբարանում:

<sup>4</sup>Քո թշնամիները մռնչում են Քո ժողովքներում,

**Իրենց դրոշներն են պարզել որպես նշաններ:**

<sup>5</sup>*Մարդը* հաստաբուն ծառերի վրա

**Կացին բարձրացնելով նշանավոր դարձավ,**

<sup>6</sup>Բայց հիմա նրա քանդակած գործերը, բոլոր միասին,

**Կացիներով ու մուրճերով ջարդուխուրդ են անում:**

<sup>7</sup>Հրի մատնեցին Քո սրբարանը .

**Գետնի հետ հավասարեցրին Քո անվան բնակարանը:**

<sup>8</sup>Իրենց սրտերում ասացին . «Եկե՛ք կործանենք նրանց բոլորին»:

**Երկրի մեջ եղած բոլոր հավաքատեղիներն այրեցին:**

<sup>9</sup>Մեր նշանները չենք տեսնում, այլևս մարգարե չկա .

**Ոչ էլ մեզանից մեկը, որ հասկանա, թե մինչև ե՛րբ է *սա* տևելու:**

<sup>10</sup>Ո՛վ Աստված, մինչև ե՛րբ պետք է հակառակորդը նախատի .

**Մի՛թե թշնամին հավիտյան անարգելու է Քո անունը:**

<sup>11</sup>Ինչո՞ւ ես հետ քաշում Քո ձեռքը՝ Քո աջ ձեռքը .

**Հանի՛ր ձոցիցդ, կործանի՛ր նրանց:**

**74:1** Խոստացյալ Երկրի պարտությունը և նվաճումը (տես՝ Ծննդ . 12:1-3) այնքան շոկային էր սաղմոսերգուի համար, որ հարցնում էր հարցեր, որոնց շուրջ մտածում էին ուխտի ամբողջ ժողովուրդը: Նրանք իրենց «յուրահատուկ» էին զգում (տես՝ Ելից 19:5-6), սակայն մոռացել էին, որ Աստծո խոստումները պայմանավորված էին իրենց հավատարմության հնազանդությամբ (տես՝ Ելից 19:5, Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30): Աստծուց առատ օրհնություններն ու պաշտպանությունը Աստծո բաժինն էր, սակայն Իր ժողովուրդը նույնպես ուներ պատասխանատվություն (այսինքն՝ հնազանդություն, տես՝ 2 Օրինաց 10:12-13):

Սաղմոսերգուն ներկայացնում է իր աղոթքը՝ հարցեր տալով (NASB)

1. Սաղմոս 74:1 – երկու հարց
2. Սաղմոս 74:10 – մի հարց
3. Սաղմոս 74:11 – մի հարց

❖ **«բարկությունդ միտում է»** Սա բառացի նշանակում է «Քո ռունգերը այրվում են»: Սա մարդաբանական դարձվածք է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ԱՆՏՐՈՊՈՍՈՐՖԻԶՄ)) Աստծո դատաստանի վերաբերյալ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԿՐԱԿ):

**74:2 «Հիշի՛ր»** Սա այս տերմինի (BDB 269, KB 269, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ . 74:1,18,22) երեք կիրառություններից առաջինն է: Սաղմոսերգուն խնդրում է Աստծուն Իր ուխտի հիշի (տես՝ Սաղմ . 74:20, «նայի՛ր Քո ուխտին», BDB 613, KB 661, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ . 106:45, Ղևտ . 26:42):

ՀԿ-յան առաջնորդները հաճախ էին աղոթում այս աղոթքը: Նրանք ուզում էին, որ Աստված հիշի Իր խոստումները և մոռանա իրենց մեղքերը: Իրականում, նրանք աղոթում էին Աստծո ողորմած բնավորությանը, որ զանց առնի ուխտի իրենց խախտումները: Սա լուսաբանում է մարդու գործողությունների տկարությունը որպես Աստծուն մոտենալու կերպ՝ միջոց: Այնուհանդերձ սա մատնացույց է անում «նոր ուխտի» (տես՝ Երեմ . 31:31-34, Եզեկ . 36:22-38) կարիքը, ՅԱՀՎԵԻ ողորմածության հիման վրա, որպես ընդունված լինելու հիմք, իսկ երախտագիտությունը՝ որպես աստվածահաճո կյանքով ապրելու կոչ:

❖ **«որ գնեցիր»** Սա ՀԿ-յան նկարագրություն է կիրառելով առևտրային տերմին («գնել», BDB 888, KB 1111, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նկարագրելու ՅԱՀՎԵԻ ուխտը (տես՝ Ելից 15:13, 16, 2 Օրինաց 32:6): Նրանք Նրան էին պատկանում Նրա ընտրությամբ և Նրա գործողությունների միջոցով, ոչ թե մարդկանց արժանիքներով (տես՝ 2 Օրինաց 9:4-6):

❖ **«ի սկզբանե»** Այս արտահայտությունը մատնանշում է Աստծո անցյալի գործերը: Սաղմ. 74:12-17-ում այն նկատի ունի ստեղծագործությունը, իսկ այստեղ՝ Ելիցը:

Այս Սաղմոսում Աստծո գործերը թե՛ ստեղծագործության մեջ և թե՛ Ելիցում միաձուլված են: Դժվար է հստակ ասել, թե որ դարձվածքին, համարին կամ ԲԱՅԻՆ է սա վերաբերում:

Ուխտի ժողովրդի տվյալ պահի դրությունը ողբերգական էր (տես՝ Սաղմ. 74:3): Սաղմոսերգուն ակնարկում է Աստծո անցյալի փրկագործությունները՝ ազատագրումները (այսինքն՝ թե սկզբի քառսից և թե՛ եգիպտական գերությունից):

❖ **«փրկագնեցիր»** ԲԱՅԼ (BDB 145, KB 169, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) առանցքային հասկացություն է (1) Ելիցում (տես՝ Ելից 6:6, 15:13) և (2) Իսրայելի զոհաբերության համակարգի աստվածաբանական նպատակի մեջ:

#### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ

❖ **«Քո ժառանգության ցեղը/ցուպը»** Այս արտահայտությունը նկատի չունի Հակոբից սերված տասներեք ցեղերից ինչ-որ մեկին, այլ բոլորին (տես՝ Երեմ. 10:16, 51:19): Եսայի 63:17-ում «ցեղ» բառը ՀՈԳՆԱԿԻ է, սակայն նաև վերաբերում է Հակոբի սերնդին՝ Իսրայելին և Աբրահամին տրված առաջին խոստումներին (տես՝ Ծննդոց 12, 15, 17):

❖ **«Սիրոն լեռ»** Տես Սաղմոս 2:6, 9:11 և 20:2 գրառումները:

#### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՈՆ

**74:3** *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ («բարձրացրո՛ւ») մեկ այլ աղոթքի խնդրանք է՝ Աստծուն խնդրելով, որ վերադառնա տաճարում այն տեղը, որտեղ բնակվում էր (տես՝ Սաղմ. 74:2գ, «բնակվել է», BDB 1014, KB 1496, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ):

Նրա սրբարանը ավիրվել էր, քանդվել և գավթվել հեթանոս գավթիչների կողմից (տես՝ Սաղմ. 74:3-4):

❖ **«թշնամին»** Ուշադրություն դարձրեք այն տարբեր կերպերը, որով բնութագրվում են հեթանոս գավթիչները՝

1. թշնամիներ – Սաղմ. 74:3, 10, 18
2. հակառակորդներ – Սաղմ. 74:4, 10, 23
3. անմիտներ – Սաղմ. 74:18, 22
4. վայրի գազաններ – Սաղմ. 74:19

Երկու պատմական միջավայրի առաջարկներ են եղել որպես այս ազգային ողբի պատճառ՝

1. Նեո-բաբելոնյան հարձակումը Բ. Ա. 586թ-ին, որի ժամանակ տաճարը այրվեց (տես՝ Սաղմոս 137)
2. Եդովմի հարձակումը Բ. Ա. 485թ-ին, որի ժամանակ տաճարը պղծվեց և ավիրվեց

**74:4-8** Նկատե՛ք ակնհայտ զուգահեռականությունը, կիրառելով «նրանք...» (NASB): Այս համարները նկարագրում են, թե ինչ են արել գավթիչները, որը պետք է ՅԱՀՎԵԻՆ ստիպել Իսրայելի կողմից գործելու՝

1. նրանք վնասել են տաճարը, Սաղմ. 74:3ա (տես՝ Ողբ 2:6)
2. նրանք մոռցացել են (հաղթության խորհուրդը, տես՝ Ողբ 2:7) տաճարում, Սաղմ. 74:4ա
3. նրանք իրենց հոթանոսական նշաններն են դրել (այսինքն՝ դրոշները, փորագրությունները, զոհասեղանը), Սաղմ. 74:4բ
4. նրանք քանդել են ՅԱՀՎԵԻ բնակարանի արվեստի գործը, Սաղմ. 74:5-6
5. նրանք ավիրել են տաճարը կրակով, Սաղմ. 74:7ա (այսինքն՝ 4 Թագ. 25:9, 2 Մնաց. 36:19)

6. նրանք պղծել են տաճարը, Սաղմ . 74:7բ
7. նրանք ցանկանում էին ամբողջովին բնաջնջել Աստծո ժառանգությունը, Սաղմ . 74:8ա
8. նրանք այրել էին ՅԱՀՎԵԻՆ պատկանող բոլոր տեղական սրբարանները, Սաղմ . 74:8բ

**74:4 «Քո թշնամիները»** Եթե Սաղմոս 74:7-ում նշված տաճարի այրվելը նույնն է ինչ 4 Թագ . 25:9-ում նշվածը, ապա թշնամիները բաբելոնացիներ են (տես՝ Ողբ Երեմիա 2):

❖ **«մոռնում են Քո ժողովրդներում»** Այս նկարագրությունը բնութագրում է հեթանոսների կողմից տաճարի տարածքի նվաճումը: «Մոռնալ» ԲԱՅԸ (BDB 980, KB 1367, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) մատնանշում է Աստծո հատուկ բնակատեղիի դաժան և հաղթական վախճանը: Այս ԲԱՅԸ կիրառվում է առյուծների համար, որը ցույց է տալիս հեթանոս զավթիչների կամակորությունն ու ուժը (տես՝ Եսայի 5:29, Երեմ . 2:15):

**74:5-6** Դահուղը, Խարիսիս Աստվածաշնչում (հատոր 17բ, էջ՝ 202) ասում է, որ «5 և 6 համարները ամբողջ Սաղմոսաց գրքում ամենախրթին և դժվարին համարներն են»: Համատեքստում դրանք պետք է որ նկարագրեն մի բան, որ հեթանոս զավթիչներն արեցին տաճարի հետ, նախքան այն այրելը: Այն արտահայտում է զավթիչների ցատումը ՅԱՀՎԵԻ հատուկ երկրպագության վայրի դեմ: Նրանք ցանկանում էին ամբողջովին նսեմացնել Իսրայելի Աստծուն:

**75:5 LXX** տալիս է բացման տողը որպես «կարծես թե երդիկից» (այսինքն՝ տաճարի վերին մասին մուտքը): Եբրայերեն արմատը՝ ִהָ־ (BDB 750-751) կարող է նշանակել՝

1. տերև, սաղարթ
2. ամբողջական ողջակեզ
3. վերելք, սանդուղք

Այս համարում ենթադրում են այն նկատի ունի տաճարի մուտքը կամ տաճարի շրջակայքը:

**74:6 «կացիներ, մուրճեր»** Այս երկու տերմինները (BDB 506 և BDB 476) ՀԿ-ում հանդիպում են միայն այստեղ: Այս Սաղմոսն հազվադեպ և յուրահատուկ տերմիններ շատ ունի:

«Կացիների» և «մուրճերի» նկարագրությունը կարող է արտացոլել Երեմիայի Բաբելոնյան գործի նկարագրությունը (տես՝ Երեմ . 46:22-23):

**74:8 «Եկե՛ք կործանենք նրանց բոլորին»** MT-ում անորոշություն կա այս համարում: Այս տողը կարող է վերաբերել՝

1. ուխտի ժողովրդի լիակատար բնաջնջմանը
2. տաճարի և երկրպագության համար տեղական սրբավայրերի կործանումը

**74:9-11** Ուխտի ժողովուրդը չէին կարողանում հասկանալ ՅԱՀՎԵԻ ակնհայտ բացակայությունը և լռությունը: Նա ընտրել էր ոչինչ չանել և անգամ հեռացրել էր Իր մարգարեական խոսքերը հասցնողներին: Նրանք խնդրում էին Նրան, որպեսզի գործի, պաշտպանի Իր անունը, տաճարը և ժողովրդին:

Խնդիրն ունի մի քանի կողմ:

1. Եթե զավթող ազգը Բաբելոնն է, ապա ՅԱՀՎԵՆ կռվում է նրանց կողմից:
2. Իսրայելը Նրա բարկության առարկան էր իրենց կռապաշտության և անհավատարմության պատճառով:
3. Սակայն, ՅԱՀՎԵՆ ունի հավիտենական փրկագործության ծրագիր, որի մեջ մտնում է Աբրահամի սերունդը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ, ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):
4. Նա և՛ դատելու է, և թե՛ փրկելու է Իսրայելին:

**74:9 «մարգարե»** Տե՛ս Ողբ 2:9-ի գուգահեռը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

**74:10** ՅԱՀՎԵՆ օգտագործում էր հեթանոսներին դատելու Իր ժողովրդին, բայց նրանք ի վերջո դատվելու են նույնպես, քանի որ՝

1. նրանք անարգում են – BDB 357, KB 355, *Piel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 74:18 (մեկ այլ օրինակ՝ Սոփ. 2:8,10):
2. նրանք արհամարհում են Նրա անունը – BDB 610, KB 658, *Piel* ԱՆԿԱՏԱՐ

Սա մի հարց է, որ բոլոր չարչարվող հավատարիմ հետևորդները հարցնում են այս անկյալ, անկատար աշխարհում: Աշխարհը կարող է լինել անկյալ, սակայն միևնույն է Աստված է այն վերահսկում (տես՝ Սաղմ. 74:12-17):

❖ «**Քո անունը**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

**74:11** Իսրայելի հանդեպ ՅԱՀՎԵԻ ցուցաբերած հոգածության պակասը աշխարհին սխալ ուղերձ է հասցնում (տես՝ Եզեկ. 36:22-38): Նա պետք է գործի, որպեսզի ցույց տա, թե ով է Ինքը և Իր մեծ նպատակը (տես՝ Սաղմ. 59:13-15):

❖ «**Քո աջ ձեռքը**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (անտրոպոմորֆիզմ):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 74:12-17**

- <sup>12</sup>Բայց ի սկզբանե իմ թագավորն Աստված է,  
Որ փրկություն է գործում երկրի մեջ:  
<sup>13</sup>Դու Քո գործյամբ ծովը ճեղքեցիր,  
Վիշապների գլուխները ջրերի մեջ ջարդեցիր:  
<sup>14</sup>Դու կտորեցիր Լևիաթանի գլուխները.  
Նրան որպես կեր տվեցիր անապատի միջի ժողովրդին:  
<sup>15</sup>Դու աղբյուրներ ու վտակներ բխեցրիր,  
Դու չորացրիր հզոր գետերը:  
<sup>16</sup>Քոնն է ցերեկը և Քոնն է գիշերը:  
Լույսն ու արևը Դու պատրաստեցիր:  
<sup>17</sup>Դու հաստատեցիր երկրի սահմանները,  
Ամառն ու ձմեռը Դու ստեղծեցիր:

**74:12-17** Այս պարբերությունը Աստծո հրաշալի, ստեղծարար գործերի վրա կենտրոնանալու կերպն է (այսինքն՝ Ծննդոց 1 կամ Ելիցը): Նա էր արարչագործության Աստվածը: Նա այս աշխարհը ստեղծել է նպատակով: Իսրայելը այդ նպատակի կարևորագույն մասն էր կազմում (այսինքն՝ Սաղմ. 74:12, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

Նկատելի գուգահեռականությունը (այսինքն՝ «Դու...» BDB 61 կիրառված է յոթն անգամ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՈՎ), որը կարող էր վերաբերել Ծննդոց 1-ի սկզբնական արարչագործությանը կամ Եգիպտոսի պարտությունը և Ելիցը:

1. ճեղքեցիր (այս երբայերեն բառն անհայտ է, այն հետևում է BDB 830 II, սակայն KB 978 չի հաստատում այս կիրառությունը) ծովը
2. վիշապների գլուխները ջարդեցիր (հավանաբար ԵՉԱԿԻ է և հետևաբար, համագոր է Լևիաթանին)
3. կտորեցիր Լևիաթանի գլուխները
4. նրան որպես կեր տվեցիր անապատի միջի ժողովրդին (համատեքստում «արարածներին» կարծես թե ավելի հարմար է, տես՝ Ես. 13:21-22, 23:13, 34:14, Երեմ. 50:39, NRSV, TEV, NJB)
5. աղբյուրներ ու վտակներ բխեցրիր
6. չորացրիր հզոր գետերը
7. Քոնն է ցերեկը և գիշերը

8. հաստատեցիր երկրի սահմանները (այսինքն՝ ծովերի, եղանակների, գիշերվա ու ցերեկվա)
9. ստեղծեցիր եղանակները (այսինքն՝ գյուղատնտեսությունը)

**74:12 «Իմ Թագավոր»** Կարծում եմ ՅԱՀՎԵՆ որպես «Թագավոր» գաղափարը ունի երկու հավանական անդրադարձ՝

1. Նա է ճշմարիտ առաջնորդը՝ գերիշխան ուխտի ժողովրդի վրա (տես՝ Սաղմ. 89:1-4, տես՝ Սաղմ. 44:4-ի գրառումը):
2. Նրան տրվում է այս տիտղոսը, քանի որ հաղթել է ջրային քառուսում որպես արարիչ (այսինքն՝ Ռախաբ/Լևախաթան /Քանանի քառուսի հրեշները/, տես՝ Հոր 26:12, Սաղմ. 89:5-10, 93:1-5, Եսայի 51:9): ՀԿ-ը ներկայացնում է արարչագործության երկու օրինակներ:
  - ա. Ծննդոց 1-2 (խոսքով արարել)
  - բ. Սաղմոս 89, 96 (հաղթելով քառուսը՝ կիրառելով շումերական, բաբելոնյան և քանանացիների առասպելական նկարագրություններից: Սա մտադիր չէ ՀՄԱ-ի այս հեթանոս աշխարհայացքներին հաղորդել իրողության շեշտադրություն, այլ օգնել ՅԱՀՎԵԻ պատգամները փոխանցելու այս մշակույթների մարդկանց, տես՝ NIDOTTE, հատոր 4, էջ՝ 548, #7):

**74:14 «Լևիաթան»** Այս տերմինը ուզարտական առասպելաբանության մեջ տարածված էր (տես՝ Ես .27:1): Տես ստորև տրված գրառումը **Եսայի 27:1**-ից:

❖ **«Լևիաթանը՝ փախչող օձը»** Լևիաթանը (BDB 531) կարծես թե եղել է ուզարտական առասպելաբանության ծովային կենդանի (տես՝ Հոր 41:19-21), նշված Հոր .3:8, Սաղմ. 104:26, Ամով 9:3-ում: Այնուհանդերձ երբեմն այն կիրառվում է որպես չար ազգի խորհուրդ (տես՝ Սաղմ. 74:13-14, հավանաբար Եգիպտոսը): Այն նմանեցվում է նրանց երկրի միջով անցնող օձաձև գետի: Երբեմն այս տերմինը առնչվում է հատկապես «Ռախաբի» հետ, որը Եգիպտոսը նկատի ունենալու կերպ է (տես՝ Սաղմ. 87:4, 89:9-10, և Եսայի 30:7): Ինձ թվում է, որ համատեքստում մենք խոսում ենք մի գետի մասին, որը խորհրդապատկերում է ազգային թշնամու՝ կա՛մ Եգիպտոսը, կա՛մ էլ Ասորեստանը (տես՝ Սաղմ. 74:12): Այս տերմինի խորհրդապատկերորեն կիրառվելու նպատակը հեշտ է, քանի որ այն նախկինում կիրառվել է Քանանի առասպելական գրականության մեջ (տես՝ Սաղմ. 74:12-17, տես՝ Գ. Արչեր, *Աստվածաշնչի դժվարությունների հանրագիտարան*, էջ՝ 239-240):

Չուզահեռներ կան՝

1. փախչող օձի (BDB 638 I) կամ ծովի վիշապի (NASB ծանոթագրություն) միջև
2. ոլորված ծովահրեշի միջև
3. ծովում բնակվող վիշապի միջև

Այս նույն ակնարկը կարելի է գտնել (1) ուզարտական պոեմներում և (2) Եսայի 51:9-ում՝ «Ռախաբ», որը նաև սահմանվում է «վիշապ» տերմինով (BDB 1072):

Միակ ակնհայտ կապը այս համարի և համատեքստի միջև Եսայի 27:11-12 է:

1. ՅԱՀՎԵՆ որպես արարիչ, Սաղմ. 74:11
2. Սաղմ. 74:12-ում Եփրատի հոսող գետերը և Եգիպտոսի վտակները
3. Ժամանակի վերջը նման է ժամանակի սկզբին (այսինքն՝ Ծննդոց 1-2, Հայտնություն 21-22)

Ըստ երևույթին Եսայու գիրքը իր գրառումների հավաքածու է երկար տարիների ընթացքում և հավաքագրվել է բառախաղերի կամ թեմաների հիման վրա, ոչ թե պատմության:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 74:18-21**

<sup>18</sup>Հիշի՛ր, որ թշնամին նախատում էր, ո՛վ ՏԵՐ,

Ու հիմար ժողովուրդն անարգում էր Քո անունը:

<sup>19</sup>Օ՛, անօրենների բազմությանը մի՛ մատնիր Քո տատրակի անձը .

Քո աղքատների ժողովքը երբեք մի՛ մոռանա:

<sup>20</sup>Նայի՛ր Քո ուխտին, քանի որ երկրի խավար տեղերը

Լեցուն են դաժանության բնակատեղիներով:

<sup>21</sup>Թող խեղճն ամոթով չվերադառնա՛,

**Թող աղքատն ու կարիքավորը փառաբանեն Քո անունը:**

**74:18-21** Այս պարբերությունը ակնարկում է Սաղմ. 74:1-11-ի սկզբնական աղոթքը: ՅԱՀՎԵՆ պետք է գործի փրկելու համար՝

1. քանի որ թշնամին անարգում և արհամարհում է Նրա անունը (տես՝ Սաղմ. 74:10)
2. քանի որ Իսրայելը իր հատուկ ժողովուրդն է (տես՝ Ելից 19:5-6)
3. Արրահամին տված Իր խոստումների համար (տես՝ Ծննդ. 12:1-3)
4. քանի որ Իր գործողությունները այն ազգերին, որոնց Նա ուզում է, որ ճանաչեն և ընդունեն Իրեն, կհասցնի ճիշտ ուղերձը:

Այստեղ կան չորս ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐԸ և երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ՝

1. ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ՝  
ա. հիշիր – BDB 269, KB 269, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 74:1, 18, 22  
բ. նայիր – BDB 613, KB 661, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐԸ՝  
ա. մի՛ մատնիր – BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 74:19  
բ. մի՛ մոռանա – BDB 1013, KB 1489, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 74:19բ  
գ. թող խեղճն ամոթով չվերադառնա – BDB 996, KB 1427, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ, Սաղմ. 74:21ա  
դ. թող աղքատն ու կարիքավորը փառաբանեն Քո անունը – BD 237, KB 248, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 74:21բ

**74:19** «տատրակ» Այս բառը (BDB 1076 II) կիրառվում է՝

1. գոհաբերության կենդանու համար, տես՝ Ծննդ. 15:9, Ղևտ. 1:14, 5:7,11, 12:6,8, 14:23,30, 15:14,29, Թվոց 6:10
2. չվող թռչունի համար, տես՝ Սող. 2:12, Երեմ. 8:7
3. որպես ուխտի ժողովրդի խորհուրդ, տես՝ Սաղմ. 74:19

Կա ևս մեկ, շատ ավելի կիրառելի բառ՝ «աղավնի» (BDB 401), որն օգտագործվում է վերոնշյալ դեպքերում (այսինքն՝ Սող. 2:14, 5:2, 6:9): Սաղմոս 74-ում կիրառված տերմինը կարող է արտահայտել՝

1. անօգնական վիճակ
2. ՅԱՀՎԵՆ դատաստանի մեջ գոհաբերելիս Իր ժողովրդին
3. սիրո մի խոսք, որն արտահայտում է Իր սերը Իսրայելի հանդեպ (Ովս. 7:11, 11:11)

Սաղմոս 74:19-ի երկու տողերը նկատի ունեն նույն բանը, ուստի կետ մեկը ճիշտ կարող է լինել:

NEB տարբերակը հետևելով LXX-ին, առաջարկում է «քո աղավնու անձը» ԴԴԴ շտկել «որը քեզ է փառաբանում» ԴԴԴ: UBS Տեքստային Նախագիծը (Էջ՝ 325) առաջին տարբերակը գնահատում է «C» (բավականին կասկածելի):

**74:20** Սա խրթին համար է մեկնաբանելու համար: Արդյո՞ք այն վերաբերում է՝

1. գավթիչների դաժանությանը
2. Աստծո ժողովրդի գերության վայրին
3. քողարկված անդրադարձ *Շեղին*, ստորգետնյա տիրակալությանը (այսինքն՝ *Շեղում*, ինչպես որ երկրի վրա, անգամ Խոստացված Երկրում):

Կարծում եմ ավելի լավ է Սաղմ. 74:20 և 21-ը դիտարկել միասին որպես ուխտի ժողովրդի կողմից կրած նեղություն: Եթե պատմական միջավայրը Բաբելոնն է, ապա գերություն, եթե Եդովմը՝ ապա Քանանի երկրում:

**74:21** «աղքատն ու կարիքավորը» Սա պարտադիր չէ, որ վերաբերի աղքատին, այլ տառապյալ ուխտի ժողովրդին (այսինքն՝ հավատարիմ մնացորդը, տես՝ NIDOTTE, հատոր՝ 3, էջ՝ 459):



**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 74:22-23**

<sup>22</sup>Ելի՛ր, ո՛վ Աստված, պաշտպանի՛ր Քո դատը .

Հիշի՛ր, թե ինչպես է անմիտն ամեն օր նախատում Քեզ:

<sup>23</sup>Մի՛ մոռանա Քո թշնամիների ձայնը .

**Քո դեմ ոտքի ելնողների խռովությունը հետզհետե շատանում է:**

**74:22-23** Սա ՅԱՀՎԵԻՆ ուղղված վերջին աղոթքն է, որպեսզի Նա գործի անցնի:

1. Ելի՛ր – BDB 877, KB 1086, *Qal* փոքր
2. պաշտպանի՛ր Քո դատը – BDB 936, KB 1224, *Qal* փոքր (երես առ երես արդարադատության համար հանդիպում նրանց հետ, ովքեր անարգում են Իր անունը և ժողովրդին, տես՝ Սաղմ. 74:3-11):
3. հիշի՛ր անմիտների նախատինքը – BDB 269, KB 269, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

ՅԱՀՎԵ՛, խնդրում ենք գործի՛ր: Գործի՛ր այնպես, որ աշխարհը հասկանա (տես՝ Սաղմ. 55:13, 83:18, Եզեկ. 36:22-38):

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Այս Սաղմոսը Խոստացված Երկրի վրա հարձակման և գրավման մասին է: Այն խնդրում է Աստծուն հիշել (տես՝ Սաղմ. 74:2,18,22) Իր ուխտի խոստումները, սակայն երբեք չի նշվում, թե ինչու Աստված թույլ տվեց Իսրայելին/Հուդային պարտվելու: Ինչո՞ւ Նա թույլ տվեց դա:
2. Ովքե՞ր են զավթիչները:
3. Արդյո՞ք երբայերեն Աստվածաշունչը կիրառում է ՀՄԱ-ի առասպելական նկարագրություններից: Ի՞նչ և ինչո՞ւ:
4. Ինչո՞ւ են Սաղմ. 74:5-6 և 74:20 այսքան դժվար հասկանալի:
5. Ո՞ւմ է վերաբերում Սաղմ. 74:21-ի «աղբատ» բառը: